ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Երեխաների միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի բարեկամնե՛ր,

Շնորհավորում եմ բոլորիս հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ: Շնորհավորանքն ամենքինս է, քանի որ մենք բոլորս գալիս ենք մանկությունից եւ վերապրում մանկությունը մեր զավակների ու նրանց զավակների հետ:

Տոնը նշվում է ամռան առաջին օրը, որը խորհրդանշում է պայծառությունն ու լուսավորությունը, ջերմությունն ու ուրախությունը: Այնպիսին, ինչպիսիք են մեր երեխաները՝ պայծառ ու լուսավոր, ջերմ եւ կենսախինդ:

Թանկագին երեխանե՛ր, ի սրտե շնորհավորում եմ ձեզ: Ձեր ծնողների, ղեկավար պաշտոնյաների հոգածության ներքո վայելեք անհոգ մանկությունը: Թո՛ղ որ իրականանան ձեր բոլոր լուսավոր երազանաքները, լիարժեքորեն հասեք ձեր նապատակների իրականացմանը: